

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՍԸ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ
ՏԸԻՉՈՒԹԻՒՆ**

24 Մարտ, 2023-ին, յետ հաղաղական ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Ծայրագոյն Վարդապետութեան տասը աստիճաններ տրուեցան Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի չորս Հոգեշնորհ հայրերու՝ Տ. Գուսան Վրդ. Ալճանեանի, Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի, Տ. Խաղ Վրդ. Ճունտուրեանի եւ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի:

Հայց. Եկեղեցւոյ «վարդապետ»-ը սկզբնական ժամանակներէն սկսեալ, միշտ ունեցած է եկեղեցական գլխաւոր առաքելութիւն եւ քարոզելու եւ ուսուցանելու պաշտօն: Եւ անշուշտ, այս առաքելութիւնը շատ լուրջ պարտաւորութիւններ կ'ենթադրէ՝ ուսումնական եւ գիտական, նկարագիր եւ առաքինութիւններ, հաւատքի կրակը դնելով իրենց ուսումին եւ ամբարուած գիտութեան մէջ: Այսպէս ընդունուած է հայ «վարդապետ»-ին եկեղեցական տիպարը:

Համաձայն եկեղեցական ծիսական դարաւոր մատենին, այս կարեւոր պաշտօնը («վարդապետական իշխանութիւն») կամ «վարդապետական աստիճան») շնորհողը «Մեծ Վարդապետ»-ն է: Միայն ծայրագոյն վարդապետական աստիճան ունեցող եպիսկոպոս մը կրնայ վարդապետական աստիճան շնորհել ուրիշ վարդապետի մը: Ըստ Մայր Մաշտոցի բուն վարդապետը ծայրագոյն վարդապետն է:

Յետ հաղաղական ժամերգութեան, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը սարկաւագներու եւ հոգեւորականներու թափօրով փոքր ատենէն «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Տաճարի Մայր դուռը եւ բազմեցաւ Աթոռին: Ընծայեալները կը ներկայացնէր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան:

Արարողութեան մասնակից երկու խարտաւիլակներն էին՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան եւ Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան: Պատրիարք Սրբազան Հայրը յատուկ աղօթքներու ընթերցումով տաս նոր աստիճաններ շնորհեց Տ. Գուսան Վրդ. Ալճանեանի, Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի, Տ. Խաղ Վրդ. Ճունտուրեանի եւ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի:

Տըւութենէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով շնորհընկալ Ծայրագոյն Վարդապետները, ականակուռ լանջախաչերով զարդարեց անոնց կուրծքը: